ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1956 Общественные науки

Ե. Մակարյան

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ ժողովուրդը համաշխարհային կուլտուրայի պատմության գանձարանում թողել է հարուստ անցյալ նաև բժշկության ասպարեզում։ Հայաստանում դատական բժշկականության պատմությունը նույնպես ունեցել է հարուստ և բազմակողմանի անցյալ։

Մեր նպատակն է ներկա հաղորդման մեջ շարադրել հին հայ դատական բժշկականության պատմության վերաբերյալ առանձին էջեր։

Մինչև 11-րդ դարը գոյություն ունեցող իրավական հուշարձաններից հիշատակության արժանի է «Կանոնագիրք Հայոց», որտեղ ընդգրկված են Հայոց եկեղեցական ժողովների և առաքյալների կանոնները։ Այդ ժողովածուի կանոնները հիմնականում վերաբերում էին հոգևորականներին։ Առաքյալներից ոմանց առանձին կանոնները որոշ անհրաժեշտ դեպքերում օգտագործվել են Սինոդի խորհրդի կողմից 19-րդ դարում։

Հայաստանի տարբեր գավառներում 12-րդ դարից սկսած երևան են գալիս աշխարհիկ բնույթի օրենսդիր հուշարձաններ, օրինակ՝ հյուսիս-արևելյան մասում «Դավիթ Ալավկա որդու կանոնները», որը և հանդիսանում է անդրանիկ աշխարհիկ բնույթի կանոնագիրքը՝ գրաբար լեզվով։ Արևելքում հանդես է գալիս «Մխիթար Գոշի դատաստանագիրք Հայոցը», արևմուտքում այդպիսի դատաստանագիրք աշխատում է գլուխ բերել Ն. Լամբրոնացին, իսկ հետագայում Սմբատ սպարապետը («Դատաստանագիրք Սմբատ իշխանի (Գունդստաբլի) Կիլիկյան դատաստանագիրք 13-րդ դարի»)։

Վերոհիշյալ դատաստանագրքերը բաղկացած են կրոնական և աշխարհական մասերից։ Պետք է նշել, որ վերոհիշյալ բոլոր իրավական հուշարձանները, նույնիսկ աշխարհիկ մասը կրում են կրոնական դոգմաների ու հայացքների ազդեցությունը։ Կրոնի ազդեցությունն ուժեղ էր նաև բժշկության զարգացման վրա։

Այնքանով, որ «Դավիթ Ալավկա որդու կանոնները» հանդիսանում են հայկական անդրանիկ դատաստանագրքի փորձը, ուստի մենք առաջին հերթին կշարադրենք Դավթի այն կանոնները, որոնք վերաբերվում են դատական բժշկականությանը։

Դավիթ Ալավկա որդին իր կանոնագրքով մաքառել է, մինչ այդ ծագած վատ սովորությունների և ապականված բարքերի դեմ։ Նա առաջարկում է առողջապահական՝ հիգիենիկ զանազան միջոցներ հատկապես պղծումների դեպքում և ցույց տալիս, թե ինչպիսի ձևերով պետք է ախտահանել ամանները կամ սնունդը, երբ դրանք շփման միջոցով վարակվում են, պղծվում են կենդանիներից։

Կանոնագրքում սահմանված են բազմաթիվ նորմաներ ամուսնական սրբապղծությունների, սեռական սանձարձակությունների, այլանդակությունների, անասնամոլությունների, արվամոլության, լեզվի, մատների և արհեստականո-

բեն պատրաստված այլ գործիքների միջոցով սեռական գրգիռ առաջացնելու և դրանով իր ցանկություններին հագուրդ տալու մասին։

Հատկանշական է այն, որ այդ դատաստանագրքում խստորեն արգելված է հակահղիացման միջոցների և դեղերի օգտագործումը, ինչպես նաև ամուսինների փոխադարձ համաձայնությամբ «սերմը» իր տեղին չօգտագործելը։

«Այլ ոմանք, արք անաւրէնք, ի շնալն իւրեանց կամ քինով կանանց իւրեանցն, զսերմ որդեծնութեան, զոր հաստատեաց Տէր յաճումն, նոքա զհակառակն գործեն Արարչութեան, այսինքն՝ արտաքս հեղուն...»[1]։

Արհեստական դեղորայքի միջոցով վիժումը՝

«...Կամ կին զտղայն ի փորին սպանանէ դեղով, կամ կոխելով կամ զորմով անկանելով...»[2]։

Դավթի կանոնագրքում ամենայն մանրամասնությամբ նկարագրված են ձեռք առնվելիք միջոցառումները պտղաշրջման և մանկահատման դեպքերում՝

«...Եւ մանկաբարձն, որ ոչ զգուշանայ ծնիցելոյ մանկանն և մեռանիցի մանուկն յանպատրաստութենէ նոցա, արեան պարտ է։ Եւ մանուկն կրկընեալ ի ներքս, պատրաստաբար ձեռն արկանել պարտ է մանկաբարձին կամ այլ արուեստաւորին՝ ուղղել զմանուկն, զի մի՝ մեռանիցի ի մայրն։ Այլ թե մեռեալ լինի մանուկն ի ներքս և նա դժուարածին լինի, յաղագս այնորիկ և մինչև ի մահ հասանի մայրն, պարտ է արուեստաւորաց գործոյն, յարանց եթէ ի կանաց, որ վստահանալն կարեն, ձեռն արկանել ի ներքս և յաւշել զմեռեալ մանուկն և արտաքս բերել, զի մայրն մի՛ մեռցի։ Ապա եթէ կենդանի իցէ մանուկն, մի՛ ոք յանդգնեալ սպանցէ յաղագս կենաց մաւրն. թո՛ղ մայրն մեռանիցի և մի՛ մանուկն։ Ապա թէ յաղագս մաւրն ոք սպանցէ զմանուկն Ժ (10) ամ ապաշխար(եաց)է»[3]։

Ինքնին հասկանալի է, որ մանկաբարձի անպատրաստությունը, կամ թե չէ մանկան մահացած լինելը ներարգանդային կյանքում, կամ ծնվելուց հետո, կարող էր որոշել միայն բժիշկը։ Նմանօրինակ կանոնները բազմազան են։

Կանգ առնելով Մխիթար Գոշի դատաստանագրքի վրա պետք է ասել, որ այս դատաստանագիրքը մեծ մասամբ տարածվել և կիրառվել է ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս՝ Լեհաստանում, Ղրիմում և Վրաստանում։

Պետք է նշել, որ հոդվածներում պատժաչափը սահմանելիս Գոշը հաշվի է առել հանցագործի տարիքը.

«Սպանութիւն ի մանկունս եղեալ, եթէ որ սպանն ի վեր քան զերկոտասան ամն է— իբր կատարեալ արիւն լիցի և ըստ այնմ տուգանեսցի, իսկ խոնարհաց քան զայգ, որպէս մետասանից և տասնամենից, կէսն լիցի. իսկ ի վայր քան զտասն — յերից մի լիցի մասն...»[4]։

Սույն հոդվածով Գոշը քրեական հանցագործությունների ժամանակ տարիքի որոշումը առաջ է քաշում հատկապես մինչև 12 տարեկան հասակը։ Այս-

---

[1] Ա. Աբրահամյան. Դավիթ Ալավկա որդու կանոնները, առանձնատիպ «Էջմիածին» ամսագրից, Երևան, 1953, էջ 27, «Կանոն ԽԴ»։

[2] Անդ, էջ 24, «Կանոն ԽԸ»։

[3] Անդ, էջ 34, «Կանոն ՀԷ»։

[4] Վ. Բասեամեանց. «Դատաստանագիրք Հայոց Մխիթարայ Գոշի», ի Վաղարշապատ, 1880, էջ 321, «Կանոն Դ, 2-րդ մաս»։

պիսի քննությունը ինչպես և այժմ առանձին դեպքերում մտնում է դատական բժշկականության էքսպերտի պարտականությունների մեջ։ Պարզ է, որ վիճելի դեպքերում բժշկի անմիջական օգնությամբ պետք է որոշվեր հանցագործի տարիքը։

Այնուհետև Մխիթար Գոշի դատաստանագրքում բավականաչափ ընդարձակ ձևով ,,հհմանված են մարմնական վնասվածքների տեսակները և դրանց հետ կապված նյութական վնասների, բուժման ծախսերի ու անգործության համար հատուցման հարցերը։

«Եթէ կռուիցին արք երկու և հարկանիցէ ոք զնկեր իւր ի նոցանէ քարիւ կամ բռնցի և ոչ մեռանիցի, այլ դնիցի ի մահիճս, եթէ յառնիցէ այրն և շրջիցի և ցրպոյ արտաքոյ, անպարտ լիցի, որ եհարն։ Մեռելոյն ապաշխարութիւն լիցի։ Բայց զխափանածոյ նորա և զբժշկութեան նորա տուգանեսցի և թէ մեռցի՝ զդինն»[1]։

Դատաստանագիրքը տարբերում է վիժման երկու շրջան՝ առաջինը՝ երբ սաղմը կազմավորված չէ, իսկ երկրորդը՝ երբ սաղմը կազմավորված է։

«Իսկ եթէ կռուիցին արք երկու և հարկանիցեն զկին յղի և ելանիցէ սաղմն աննկար, կէս վնասու տուգանիցի որչափ ինչ արկանիցէ նմա այր կնոջն, և տացէ աղաչելով։ Ապա թէ կերպարանեալ իցէ, տացէ անձն ընդ անձին...»[2]։

Մեր կարծիքով, ինչպես նախորդ հոդվածներում, այնպես էլ այս վերջին հոդվածում, նախատեսված հանցագործությունների քննության ժամանակ կարիք է զգացվել բժշկի անմիջական միջնորդությունը։

Վերոհիշյալ կանոնագրքերի և դատաստանագրքերի կանոններում դրանց պարզաբանման տեսակետից գրեթե նմանօրինակ մոտեցում է ցուցաբերվել։

Վերոհիշյալ կանոնագրքերում և դատաստանագրքերում արտացոլվել են, ոչ միայն իրավաբանական, այլև բժշկական ու դեղագործական նորմաներ։ Այդ օրենսգրքերում ուղղակի կամ անուղղակի ձևերով արտահայտվել են նաև ժամանակակից պատմական կարևոր անցուդարձերը, հայկական սովորություններն ու բարքերը։

Դատաստանագրքերում առանձնապես մեծ տեղ են գրավում հարազատ և ապօրինի երեխաների սպանության տարբեր տեսակների հարցերը, միմյանցից տարբերում են նաև սպանության պրոցեսում անձի դրսևորած մեղքի ձևերը (անզգույշ և դիտավորյալ)։

Մխիթար Գոշը մեղադրել է նաև բժշկին, անփութության կամ շահախնդրության պատճառով հիվանդին հասցրած վնասների համար.

«Բազումք ի բժշկաց բազում վնասս գործեն դեղօք և կամ ի փորձել զդեղս յայլս, և կամ չարակամութեամբ սպանանեն դեղօք, և կամ վասն անգիտության զվնասակարսն տան ի դեղոց, կամ անվարժ գոլով զցաւսն ոչ զիտեն ճանաչել և յաղագս այնորիկ մահ գործեն հիւանդաց, կամ հեզգանան յաղագս ըստ կամաց զվարձն ոչ տալոյ և այնպէս վնասեն, կամ նախանձելով ընդ աշակերտս ոչ ուղիղ ուսուցանեն և նոքա անգիտանալով

---

[1] Վ. Բասամեանց, Դատաստանագիրք Հայոց Մխիթարայ Գոշի, ի Վաղարշապատ, 1880, էջ 339, «Կանոն ԻԶ, 2-րդ մասն»։

[2] Անդ, էջ 341, «Կանոն ԻԸ, 2-րդ մասն»։

բազում արարին վնաս, և թէ այլ ինչ ախտս ցաւոց մուծին՝ եթէ՛ ինքեանք, եթէ՛ աշակերտօքն,— զայսոսիկ զամենեսեան կամաւորս գիտեմք։ Իսկ ակամայք — զորի հիւանդին տեսողացն հեղգութենէ լիցի վնասն կամ ի հիւանդին, կամ զի ըստ հրամանի նորա զհիւանդն ոչ դարմանեցին, կամ ի մեծ ինչ հարկէ ոչ եղև հնար գալ բժշկի առ հիւանդն և յաղագս այնորիկ մահ եղև, կամ գիտութեամբ դեղ տուեալ կենաց՝ մահու եղև պատճառք։ Սոյնպես հատանելն և խարելն ադոքիւք դատիցին...»[1]։

Խոսելով դիտավորյալ կամ ակամա սպանությունների մասին, Գոշը առաջարկում է 25 կետերից բաղկացած մի կլասիֆիկացիա, որտեղ մեկ առ մեկ շարադրում է թե ինչպիսի պարագաներում առաջացած սպանությունները դիտավորյալ են, և ինչպիսի պայմաններումն անզգույշ[2]։

Հիշատակության արժանի են նաև մի շարք կանոնագրքեր, որոնք, ինչպես Մխիթար Գոշի դատաստանագիրքը, անպես էլ այդ կանոնագրքերի որոշ կանոնները, իրենց արժեքը չեն կորցրել և օգտագործվել են 19-րդ դարում, Էջմիածնի Սինոդի խորհրդի կողմից՝ Բարսեղի, Ներսեսի և Նիո Կեսարիայի կանոնները։

Կանգ առնելով Սմբատ իշխանի (Գունդստաբլի) դատաստանագրքի հոդվածների վրա, պետք է ասել, որ Սմբատ իշխանի դատաստանագրքի առավելությունը նախորդներից կայանում է նրանում, որ այստեղ հոդվածներն ըստ իրենց ներքին բովանդակության խմբավորված են նույնանման հոդվածների և առանձին վերնագրերի տակ, իսկ պատժաչափը սահմանելիս, ավելի խիստ է մոտեցված, քան նախորդները։

Այս դատաստանագրքում, առաջին անգամ լինելով, ուշադրության է արժանանում մարմնական թեթև վնասվածքներին վերաբերվող հոդվածը՝ մանրմունր ծեծեր, կապտածություններ, արյունազեղումներ[3] և այլն։

«Կանոնագիրք և դատաստանագրքում» առաջին անգամ հանդիպում ենք մեղադրանքի դեղագործի նկատմամբ, սխալ կամ ո՛չ ճիշտ քանակությամբ դեղ բաց թողնելու հետևանքով առաջացած մահացության մասին.

«Եթէ դեղավաճառն, որ պարսից լեզուն կոչի ադդար վաճառեսցէ դեղ ինչ փոխանակ այլ դեղի, յորմէ պատճառիցի սաստկանալ ցաւոց հիւանդին կամ մեռանիլ...»[4]։

«Եթէ ոք վաճառեսցէ այնպիսի դեղ, որ ոչ է տեղեակ, զի մի վնաս մանաւանդ մահ պատահեսցէ...»[5]։

Նույն այս ձեռագրում մենք հանդիպում ենք մեղադրանք սափրիչի նկատմամբ, այն դեպքերում, եթե նա հիվանդից արյուն կվերցնի առանց բշժկի կարգադրության՝

«Ոչ է օրէն սափրիչին առանց հրամանի բժշկաց առնուլ արիւն ի հիւանդաց և ցաւագարելոց...»[6]։

---

1 Վ. Բասամեանց. «Դատաստանագիրք Հայոց Մխիթարայ Գոշի», ի Վաղարշապատ, 1880, էջ 430—431, «Հոդված 119, 2-րդ մաս»։

2 Անդ, էջ 426—429, «Հոդված 117, 2-րդ մաս»։

3 Ա. Ղլտեյան. «Դատաստանագիրք Սմբատ իշխանի (Գունդստաբլի)», Էջմիածին, 1918, էջ 70, «Հոդված 141»։

4 Ձեռագիր № 448, էջ 255, «Հոդված 25»։

5 Անդ, էջ 255, «Հոդված 27»։

6 Անդ, էջ 257, «Հոդված 33»։

Վերոհիշյալ կանոնները և հոդվածները հիմք են տալիս պնդելու, որ Հայաստանում արդեն նախադրյալներ կային դատական բժշկականության զարգացման համար։

Հայաստանում դատական բժշկականության պատմության ուսումնասիրության տեսակետից առանձնապես նշանակություն ունեն այնպիսի դեպքեր, որոնց մեջ հանդես է գալիս բժշկի դերը՝ մահացության դեպքերը քննելու, մարմնական վնասվածքների աստիճանը որոշելու, մասնագիտորեն ուսումնասիրելու և համապատասխան եզրակացության հանգելու համար։

Հայաստանում միջին դարերում հայտնի են եղել ոչ միայն սպանության ձևերը, այլև հարվածող գործիքների տեսակները, այդ իսկ պատճառով հետաքրքրքական է՝

«Ու արդ գիտացիք և զայս զի բազում են սպանութեան տեսակք է՝ որ սրով և այլ գործաւք սպանանեն, և են որ դեղաւք և այլ բազում հնարեաւք և են որ ի մահ և ի սպանումն մատնեն և պատճառ լինին սպանման...»[1]։

Անցնելով մարմնական վնասվածքների աստիճանների բնորոշմանը, պետք է նշել, որ հայ մատենագիրներից Գրիգոր Տաթևացին, իր «Գիրք Հարցմանց» հանրահայտ աշխատության էջերում թողել է շատ արժեքավոր կլասիֆիկացիա, բաժանելով դա երկու խմբերի՝ մահացու կամ կյանքին սպառնացող վնասվածքներ, և ոչ մահացու մարմնական վնասվածքներ՝

«...Առաջին անգամն և ըղեղն է. երկրորդ սիրտն է. երրորդ լերդն է չորրորդ թոքն է. հինգերորդ երիկամունքն է. վեցերորդ լեղին է. եօթերորդ փայծախն է. և այս է. անդամքս որ կանի մարդն նա չեն նմանի դրսային անդամքն. այսինքն ի աչքն, կամ ի ձեռքն, և կամ ի յոտքն, որ թէ զայս ոնց զմեկն կտրեն, կամ զերկուսն, կամ զերեքն, նա մարդ ապրի, իսկ այդ է. անդամքս որ կան, ի մարդոյն ներքևսն, և իրմովդ է կենդանութիւն մարդոյն. եթէ մեկն ի դոցանէ որ պակասի անճարակ մարդն մեռանի...[2]։

Նույն այդ աշխատության մեջ Տաթևացին մանրամասն բացատրում է, թե ինչպես մի անձնավորության մոտ հոգևարքը կարճ է տևում, իսկ մի ուրիշի մոտ երկար.

1. Նախ, ի պընդակազմ մարմնոյն դժուարաւ լուծանին տարերքն։
2. Ի թուլութիւնէ ցաւոյն։
3. Ի վերին տեսչութեանց[3]։

Խոսելով բժշկի պարտականությունների մասին, Տաթևացին գտնում է, որ բժիշկը պետք է լինի իմաստուն և գիտուն, այդ իսկ պատճառով գիտությամբ նա պետք է ճանաչի թունավոր դեղը արտաքինից, ինչպես ճաշի մեջ, այնպես էլ զգեստների վրա։

Բացի մահացու և ոչ մահացու վնասվածքներից, մենք դիտողություններ ունենք նաև թեթև մարմնական վնասվածքների մասին, Աղվանից Վաչական արքայի կանոնում՝ կռվի ժամանակ առաջացած արյունահոսությունների դեպքում.

---

1 Ձեռագիր № 1475, էջ 129ա.
2 Գրիգոր Տաթևացի, «Գիրք հարցմանց», ի Կոստանդնուպոլիս, 1729, էջ 10բ—11ա։
3 Անդ, էջ 668։

«Քրիստոնեայ մարդ՝ որ կռուի և արիւն հեղու, տարցեն առաջի եպիսկոպոսին և ըստ օրինացն պատուհասեսցեն...»[1]։

Փաստերը ցույց են տալիս, որ Հայաստանում դիահերձումներ են կատարվել մահվան պատճառները որոշելու համար, ինչպես և մահվան պատճառները որոշվել են ոչ միայն սպանությունների, այլև հանկարծամահությունների ժամանակ՝

«...Դէպ եղև նմայ յանկարծ(ա)կի մեռանիլ, իսկ բարեկամքն և ազ(գա)կանք նորա պատառեցին զյորովայն նորա, զի տեսցէն, թէ զինչ իցէ պատճառն յանկարծակի մահուան նորա...»[2]։

Հաջորդ հերձման փաստը արձանագրում է Վարդան վարդապետը՝

«...Եւ նա սպան զնա և հանեալ զսիրտն հերձ.ն...»[3]։

Այստեղ տեսնում ենք նաև ներքին օրգանների հերձման նկարագրությունը։

Այն մասին, որ հերձման տեխնիկան և մարդակազմությունը (անատոմիան) հայտնի են եղել հայ բժիշկներին, դրանում կասկած լինել չի կարող, այդ կողմից բերենք և՛ս մի փաստ՝

Կիլիկիայի Լևոն թագավորը մահացավ 1219 թ., մահանալուց հետո առաջացավ այն տարաձայնությունը՝

«Զի կէսքն ասէին թաղել զնա յարքայական քաղաքին ի Սիս, և այլքն ի վանքն՝ որ կոչի Ակներ... Ապա միաբանեալ ամենեցուն տարեալ զմարմին նորա թաղեցին ի Սիս քաղաքն, և զսիրտն և զփորոտին տարան ի վանքն՝ որ կոչի Ակներ...»[4]։

Այս փաստերը առավել ևս ակնառու են դառնում, երբ վկայակոչում ենք Լ. Խաչիկյանի «Դիահերձումը հին Հայաստանում» աշխատությունը, որտեղ հեղինակը փաստեր է բերում այն մասին, որ հին Հայաստանում մահապարտներին հերձելիս են եղել և, որ հերձման տեխնիկան հայտնի է եղել հայ բժիշկներին[5]։

Հայաստանում մահվան պատճառները որոշվել են հերձումների միջոցով, եղել են ուշացած դեպքեր, որի ժամանակ մահվան պատճառները որոշվել են էքսհումացիայի և զննման միջոցով՝ օրինակ, Անիի Սմբատ թագավորը, որը մահացել է 989 թվականին և թաղված է եղել հիշյալ քաղաքում, թաղումից մի քանի օր անց քաղաքում տարածվում է այն լուրը՝

«Թէ թագաւորն թմբրական դեղոր դնի ի գերեզմանի և կենդանի է...»[6]։

Այս լուրը հասնում է նրա եղբայր Գագիկ թագավորին, վերջինս հրամայում է, որ գերեզմանից հանեն իր եղբոր դիակը և ստուգեն։ Ստուգման արդյունքն այն է լինում, որ զորքին և ժողովրդին հայտնում են տարածված լուրերի սխալ լինելը։ Սա էքսհումացիայի և դիակի զննման տիպիկ օրի-

---

[1] Մովսեսի Կաղանկատուացւոյ, «Պատմութիւն Ազուանից աշխարհի», Թիֆլիս, 1912, էջ 100։

[2] Ն. Մառ, «Ժողովածոյք Առակաց Վարդանայ (Այգեկցի)», մասն 2-րդ, Ս. Պետերբուրգ, 1894, էջ 337։

[3] Ձեռագիր № 8727, էջ 294ա։

[4] Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1909, էջ 176—177։

[5] Լ. Խաչիկյան, «Դիահերձումը հին Հայաստանում», Տեղեկագիր ՀՍՍՌ Գիտ. ակադեմիայի, Երևան, 1947, № 4։

[6] Ձեռագիր № 1482, էջ 85բ—86ա. Ստեփանոս Ասողիկ, «Պատմութիւն տիեզերական»։

նակ է, պարզելու թե թագավորը կենդանի՞ է թաղված եղել, թե՞ մեռնելուց հետո։ Ինքնին հասկանալի է, որ այդ փաստը հնարավոր չէր հաստատել կամ պարզել, առանց մասնագետ բժշկի մասնակցության։

Հանկարծամահությունները միշտ և ամեն քայլափոխում եղել են հայ մատենագիրների ուշադրության կենտրոնում և ուսումնասիրվել են ամենայն մանրամասնությամբ՝

«Քանզի ոմանք ողջութեամբ ննջեն յերիկունն և ի վաղիւն ոչ հասանեն, և բազումք ի սեղանոյն յափշտակեցան և այլք երթալով և խաղաղալով յանկարծակի մեռան, և ոմանք ի բաղանիս մտին և զբաղանեացն զգեստ տարան ի պատանս...»[1]։

Հանկարծամահության մանրակնին ուսումնասիրությունը մենք նկատում ենք 14-րդ դարի մատենագիր Սահակ Կրոնավորի բժշկական ժողովածուում, որտեղ հեղինակը նկարագրելով հանկարծամահությունների զանազան դեպքերը, պարզորոշ կերպով ցույց է տալիս թե երբ և ինչ պայմաններում մարդ կարող է հանկարծակի մահանալ, մանրամասն նկարագրելով պատ-անատոմիական պատկերը և կլինիկան։ Սահմանափակվում ենք միայն մի օրինակով.

«Վասն որ քրտնած մարդն պատրաստի ի հով ջրոյ, զի յոյժ վնասակար է զի սրտին երակսն բացվել է, և յառաջ խաղցել, և կենդանական արիւնն, և պաղ ջուրն մտանէ յարձակ տեղին ջերմութենէ և խոցտուկն ձգէ ի սիրտն. և սառուցանէ զարիւնն և շարժէ ցաւ սաստիկ, և յանկարծակի մահա-(նա)...»[2]։

Հայ մատենագիրներին հայտնի է եղել դեռ 7-րդ դարից իրեղեն ապացույցների և դեպքի վայրի կարևոր նշանակությունը։ Այդ մասին Հովհան Մամիկոնյանը գրում է, որ երբ կտցեցին Վահանի գլուխը, ծառայիցը վերցրին և պահեցին այրունոտ շորերը, իսկ գետնից մաքրեցին արյունը[3]։ Հասկանալի է, որ խուսափել են հետագայի անախորժությունից՝ թաքցնելով հանցագործության հետքերը, ինչպես իրեղեն ապացույցի, այնպես էլ դեպքի վայրի։

Գրիգոր Դարանաղցին գրում է՝

«Եկեալ ի գիշերի ի խցին յորում ննջէր ինքն միայն, և բացեալ դիւրաւ զփականս դրանցն ի ներքոյ և անդամ անդամ յօշեցին, և հանեալ էին արտաքոյ վանացն և ցրուեալ էին զամենայն յօշեալ անդամսն յատուկ յատուկ ի տեղիսն...»[4]։

Այստեղ ևս ունենք հանցագործության հետքերի թաքցնում՝ միայն թե ավելի կատարելագործված ձևով։ Ենթակա անձը անդամահատվում է մանր մասնիկների, որպեսզի հետագայում հնարավոր չլինի անձի իսկությունը պարզելու։

Ի վերջո կանգ առնելով դիակների նեխման փաստն արձանագրող տվյալների վրա, պետք է ասել, որ այս հարցը ևս ուսումնասիրված է եղել մեր մատենագիրների կողմից, սկզբից մինչև նրա քայքայման վերջնական ստադիան։ Այս ասպարեզում պետք է հիշատակել մատենագիր Փավստոս Բյուզանդին՝

«Նրան մերկացրին՝ ինչպես մորից մերկ և ոտներին չվան ձգելով՝ գլխիվայր կախեցին այն բարձր տեղից, և այսպես մեռավ կախաղանի վրա...

---

1 Ձեռագիր № 1475, էջ 177բ։

2 Ձեռագիր № 8382, էջ 155բ—156ա, 165ա—165բ։

3 Հովհան Մամիկոնեան, «Պատմութիւն Տարօնայ», Երևան, 1941, էջ 189—191։

4 Գրիգոր Դարանաղցի, «Ժամանակագրութիւն», Երուսաղեմ, 1915, էջ 430։

մինչև, որ քայքայվեց նրա ամբողջ մարմինը։ Եվ որքան, որ ներքև էին թափվում նրա ոսկորները նա ժողովում էր...»[1]։

15-րդ դարի սկզբներին կլասիկ ձևով նկարագրված է, թե ինչպես են խեղդվում, երբ պարանոցը փակվում է պարանով և ցույց է տրված այն դեպքում, երբ շնչափողը լրիվ չի փակվում.

«Եւ յայտէ զի որքան արտաքին օդս կայ և ընթանայ ի ներս, ոչ մեռանի մարդն...»[2]։

Այսքանով չեն վերջանում կանոնագրքերում և դատաստանագրքերում եղած կանոնները և հոդվածները, որոնք կարիք ունեն պարզաբանման, բժշկի անմիջական մասնակցության և օգնության, նրանք բազմազան են։

Տալով այս հաղորդումը, մենք բավականանում ենք այսքանով և ցույց ենք տալիս, որ վերոհիշյալ սակավաթիվ փաստերն էլ բավական են բացահայտելու այն, որ հին Հայաստանում գաղափար են ունեցել դիակային երևույթների՝ նեխման, հերձման, էքսհումացիայի, կենդանի անձանց ուսումնասիրության բազմաթիվ հարցերի մասին և նրանք բավական ճիշտ կերպով արտացոլումն են գտել իր ժամանակի ձեռագրերում։

---

[1] Փավստոս Բյուզանդ, «Հայոց պատմություն», Երևան, 1947, էջ 226։
[2] Ձեռագիր № 1402, էջ 83բ։